ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022 թվականի սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 3-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Աննա Հարությունյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2022-2023 ուսումնական տարվա անելիքները:
2. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին. – «2022-2023 ուսումնական տարվա անելիքները» հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Աննա Հարությունյանը : Նա նշեց, որ շարունակելու է ստանձնել դասղեկի պարտականությունները և հուսով է, որ աշակերտ- ծնող դասղեկ փոխհարաբերությունները հիմնված կլինեն փոխադարձ հարգանքի, սիրո և փոխըմբռնման վրա, միահամուռ ուժերով կկարողանան լուծել ուսումնական գործընթացում առաջացած խնդիրները:

Իր խոսքում դասղեկ Աննա Հարությունյանը նշեց, որ այս ուսումնական տարում դասագրքերը կրկին առանց վարձավճարի են,բոլորն արդեն ստացել են իրենց դասագրքերը:Ներկայացրեց այն բոլոր աշխատանքային տետրերի,գրենական պիտույքների ցանկը,որոնք անհրաժեշտ են սովորողին դասապրոցեսը լիարժեք անցկացնելու համար:

Որոշեցին.- Ձեռք բերել բոլոր անհրաժեշտ պարագաները:

2. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասղեկ Նելլի Քոչարյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, հույս հայտնեց,որ այս տարի կրկին համագործակցելու են միմյանց հետ, և շատ է ցանկանում, որ այդ համագործակցությունն ընթանա փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում: Ընկեր Հարությունյանը նշեց նաև, որ նոր ուսումնական տարում ձևավորելու են նոր ծնողական խորհուրդ՝ նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Բոլոր ծնողների համաձայնությամբ որոշվեց ծնողական խորհրդի կազմը թողնել անփոփոխ:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1.Մարտիրոսյան Ռոզա
2.Ղազարյան Մարիամ
3. Վարդանյան Թերեզա

4. Փանոսյան Թերեզա
5.Հովհաննիսյան Աննա

Ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Վարդանյան Թերեզան :

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասղեկին:

3. Լսեցին.-Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ռեժիմ/աշխատանքային տետրեր/:

Դասղեկը նշեց , որ նոր ուսումնական տարում դասերը սկսվելու են ժամը 9^{00}-ին, ավարտվելու են 14^{10}-ին : Ուսուցումը հնգօրյա է:Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն ճիշտ ժամանակին,աշակերտավայել կեցվածքով:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին պատրաստ, բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, հետևեն սանիտարահիգիենիկ վիճակին:Յուրաքանչյուր երեխայի ապահովվել համապատասխան աշխատանքային տետրերով:

Ժողովի նախագահ՝ Վարդանյան Թերեզա
Քարտուղար՝ Հովհաննիսյան Աննա